ձևով, որոյ տարազը աւելի արևմտեան է քան թէ հայկական, Լուսաւորչի առջև ծունր դրած են Տըրդատ թագաւոր և Աշխէն տիկին։ Այդ պատկերին օրինակը կայ Խարասուի Ս. Լուսաւորչի եկեղեցւոյն մէջ, այլ բունը շատ գերազանց է քան զգաղափարը։ Ունի եկեղեցիս բարձր վերնատուն մի, յորում վայելուչ կը հնչէ ներդաշնակ երգեհոնն։ Երկարօրէն խօսեցանք երկու հայկական եկեղեցեաց վրայ. վասն զի արդէն հայ ճանապարհորդի համար այդ եկեղեցիքն են քաղցր յիշատակ ազգութեան, մինչդեռ նոցա ծուխն և ժողովուրդք օտարացած են և այլախօսք։

Զ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔ

Ազգային պատմիչք որոշ չեն նշանակած ազգիս 'ի Ռուսաստան, 'ի Լեհաստան և Ղրիմ գաղթման ժամանակամիջոցը։ Թէպէտ և 'ի Թէոդոսիա գրուած Յայտաւուր[1] մի գոհացուցիչ կերպով կը

1. Ժէ դարուն մէջ մագաղաթեայ Յայտաւուրք 'ի Կաֆա գրուած։ Այս Յայտաւուրքն նոր Նախիջևանցիք 1776 ին Ղրիմէ գաղթած միջոցին հետերնին տարած են։ Վ. Հ. Մինաս Բժշկեան՝ Նախիջևանու Նեսվիթա գիւղին մէջ ձեռք ձգելով այդ Յայտաւուրքը օրինակած և տպագրած է յիւրում ճանապարհորդութեան 'ի Լեհաստան այդ թանկագին յիշատակարանը. Պոտոռ-Ռէ-Ն Ռէցոս Քեֆէէ վերնագրով. տես 'ի ճանապարհորդութեանն, էջ 335։ Այս տարի (1884) մայիսի մէջ գնալով 'ի Նեսվիթա գիւղը՝ խնդրեցի տեսնալ այդ Յայտաւուրը, այլ 'ի զուր զի հոն չէր։ Յաւալի է եթէ ձեռքէ ձեռք անցնելով կորսուի այդպիսի հաղուագիւտ յիշատակարան։